ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» ՀՈՒՆԻՍԻ 2020 թվական, N 50-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ՔԱՂԱՔ ԱԼԱՎԵՐԴԻ, ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍ, N 2/11-5/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Թույլատրել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/11-5/1 հասցեում գտնվող, բնակելի կառուցապատման նշանակության 0.0066 հա մակերեսով հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարել:
2. Հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն աղյուսակի:
3. Սահմանել՝ աճուրդի մասնակցության վճար 15000 դրամ և քայլի չափ՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	Արտուշ	Աբելյան			
2.	Արթուր	Դավթյան			
3.	Արմեն	Կարապետյան			

4.	Սեյրան	Հովհաննիսյան			
5.	Ալիկ	Նասիբյան			
6.	Դավիթ	Նոնինյան			
7.	Սվետլանա	Պետրոսյան			
8.	Վալերի	Վարոսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020թ. ՀՈՒՆԻՍԻ 25-Ի N 50-Ն ՈՐՈՇՈՒՄՈՎ

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /հա/	Նպատակային նշանակությունը	Հողատեսք	Գործառնական նշանակությունը	Մեկնարկային գինը	Սահմանափակումները
1	Ավտոտնակ կառուցելու	Համայնք Ալավերդի, ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/11-5/1	06-002-0061-0170	0.0066	բնակավայրերի	-	Բնակելի կառուցապատման	198 000 դրամ	չկա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ